23.qxd 22/11/2026 17:46 Page 1

Գեղամա աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 25 նոյեմբերի 2026թ. թիվ 23 (651)

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳ Է ԲԱՑ ԹՈՂՆՎԵԼ ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ ՄԱՆՐԱՋԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՄԲԱՔԱՆԱԿԸ



«Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամը» 2026 թվականի նոյեմբերի 16-ին եւ 17-ին իրականացրել է Սեւանի իշխանի մանրածկան բացթողման հերթական միջոցառումները:

Նշված երկու օրերի ընթացքում Սեւանա լճի էկոհամակարգ է բաց թողնվել Սեւանի իշխանի «Գեղարքունի» ենթատեսակի ընդհանուր առմամբ շուրջ 705 700 մանրածուկ՝ 6.8 գրամ միջին զանգվածով:

2026 թվականի ծրագրով նախատեսված Սեւանա լճի էկոհամակարգ ընդհանուր առմամբ բաց է թողնվել շուրջ 1 միլիոն 26000 հատ Սեւանի իշխանի «Գեղարքունի» եւ «Ամառային» ենթատեսակների մանրածուկ:

Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ ՇՄ նախարար Համբարձում Մաթեւոսյանը, ՀՀ բնապահպանական եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, փոխմարզպետ Վահան Ջարոյանը, «Սեւան Ազգային պարկ»-ի տնօրեն Կարեն Մնացականյանը, «Սեւանի իշխանի պաշարների վերականգնման եւ ձկնաբուծության զարգացման հիմնադրամի» տնօրեն Մուշեղ Մանասյանը, «Սեւանի իշխան» ՓԲԸ Կարճաղբյուրի ձկնաբուծարանի տնօրեն Տիգրան Վարդանյանը:

«Գեղամա աշխարհ»



ԴՊՐԱԲԱԿ-ԿԱՂԱՎԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՆ ՇՈՒՐՋ 80 ՏՈԿՈՍՈՎ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում 2026 թվականի մարտի վերջերից մեկնարկել եւ ընթանում են Դպրաբակ-Բարեպատ-Կալավան մարզային ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 51 միլիոն 152 հազար դրամ, որը հատկացվում է պետական միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է 8 կիլոմետր երկարության ճանապարհի խճային հիմքի, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի, ջրահեռացման համակարգի տեղադրում, իսկ բնակավայրերի ներսում՝ մայթերի կառուցում: Ասֆալտապատվող ճանապարհի մակերեսը կազմելու է 57 600 քառակուսի մետր: 1033 քառակուսի մետր մակերեսով ասֆալտապատում էլ պետք է իրականացվի ճանապարհի մուտքերում եւ իջատեղերում:

Շինարարական աշխատանքների պատվիրատուն ՀՀ ՏԿԵ նախարարությունն է, իրականացնող կազմակերպությունը՝ «Քարավան-11» ՍՊԸ-ն:



2026 թվականի նոյեմբերի 26-ի դրությամբ ավարտվել են մայթերի, ջրահեռացման համակարգի կառուցման, հիմքի եւ ասֆալտբետոնյա ներքին շերտի տեղադրման աշխատանքները, իսկ ասֆալտբետոնյա վերին շերտի տեղադրման աշխատանքներն իրականացված են կիսով չափ: Շինարարության ավարտից հետո կիրականացվեն նաեւ ճանապարհի կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

Վերջերս ճանապարհի կառուցման շինհրապարակ է այցելել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը՝ շինարարական աշխատանքների մշտադիտարկում իրականացնելու նպատակով:

Ջրօսապաշրջային մեծ նշանակություն ունեցող այս ճանապարհը պատմության մեջ ասֆալտապատվում է առաջին անգամ:


Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի դեկտեմբերին:

ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԻԶՎԱԾՔԸ

Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղը գտնվում է Սեւանա լճից մի քանի կիլոմետր դեպի հարավ, Մարտունի խոշորացված համայնքում, Մարտունի գետի երկու ափին, մարզկենտրոն Գավառից 37 կմ հարավ-արեւելք, ծովի մակերեւույթից 2060 մետր բարձրության վրա, Վարդենիսի եւ Գեղամա լեռնավահանների ստորոտների հատման կետում ծվարած մի երկար ու լայն ձորի մեջ: Գյուղը Գեղհովիտ է վերանվանվել 1968 թվականի հուլիսի 3-ին, ՀԽՍՀ մինիստրների խորհրդի որոշմամբ: Իսկ մինչ այդ այն կրել է Վերին Ղարանլուղ օտարահունչ անունը, որը թուրքերենից բառացի թարգմանությամբ նշանակում է Մթնաձոր:

Գուցե թե հենց սա է այն հնադարյան հայկական անվանումը, որը տրված է եղել պատմական հարուստ միջավայր կրող այս շենին: Մթնաձոր անունը տրված է եղել նաեւ Մարտունի քաղաքի այն հանդամասին ու ձորին, որը Գեղհովիտի հարավարեւելյան թեւից թեքվում է դեպի արեւելք ու խորանում մի քանի տասնյակ կիլոմետր՝ հասնելով գրեթե Մարտունի գետի ակունքները: Ու պատահական չէ, որ Գեղհովիտին անմիջական սահմանակից Մարտունի քաղաքն էլ շուրջ մեկուկես դար կրել է ասպատակող ցեղերի կողմից կնքված Ներքին Ղարանլուղ անվանումը:

Գեղհովիտը հյուսիսից սահմանակից է Մարտունի քաղաքին, հյուսիսարեւմուտքից՝ Ներքին Գետաշեն գյուղին, արեւմուտքից՝ Մադինա ու Վերին Գետաշեն գյուղերին: Արեւելյան կողմից գյուղը երիզում է Մարտունի քաղաքի հարավային կողմից սկսվող ու մի քանի կիլոմետր դեպի հարավ ձգվող լեռնաշքաո, որի բարձունքում էլ հեռավոր ժամանակներում կառուցվել է «Ջոջ կող» կիկլոպյան ամրոցը: Արեւմտյան ու հարավային կողմերից Գեղհովիտը սահմանակից է Վայոց Ձորի ու Արարատի մարզերին: Գեղհովիտով է անցնում Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ճանապարհը:



Հարավային կողմից գյուղի վարչական սահմանն ավարտվում է Գեղարքունիք-Վայոց Ձոր սահմանաբաժանում գտնվող Օրբելյանների հայտնի քարավանատան մոտ:

Գեղհովիտի վարչական տարածքը կազմում է շուրջ 15 հազար հեկտար՝ ներառյալ Գեղհովիտ ու Լեռնակերտ գյուղերի բնակելի գոտիները, արոտները, խոտհարքերը եւ վարելահողերը:

2026 թվականի նոյեմբերի ամսի դրությամբ Գեղհովիտի բնակչության թիվը կազմում է 6373 շունչ, որոնք բնակվում են 1180 տնտեսություններում:

Բնակչության հիմնական մասը, գրեթե 100 տոկոսը, ազգությամբ հայեր են՝ Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդներ:

Հուշարձանների պահպանության պետական ցանկում Գեղհովիտում գրանցած է Կիկլոպյան դարաշրջանի երկու ամրոց, 1 մենհիր, 2 ժայռապատկերաստղադիտարան, բրոնզեդարյան 3 դամբարանադաշտ, 6 պատմական գերեզմանոց, 4 գյուղատեղի, 3 եկեղեցի, 2 մատուռ, 4 ջրաղաց, 1 ծիթհան, 1 գլխատուն, 1905 թվականին կառուցված 2 կամուրջ:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

23.qxd 22/11/2026 17:46 Page 2

ԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՆՈՐ ԱՆՏԱՌԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանում ՀՀ ՇՄՆ Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակի (ԲԾԻԳ) պատվիրակությամբ, «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կողմից Գավառ քաղաքում անտառպատման աշխատանքների իրականացման նախաձեռնության շրջանակներում կազմակերպվել է հանրային լսում:

Հանրային քննարկմանը մասնակցել են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի, «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի, Գեղարքունիքի մարզպետի, Գավառի համայնքապետարանի աշխատակազմերի, բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներ, բնակիչներ:

Բացման խոսքով հանդես է եկել Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը՝ հավաստելով, որ համայնքապետարանն իր լիազորությունների շրջանակում առավելագույնս օժանդակելու եւ աջակցելու է Գավառ քաղաքում անտառպատման աշխատանքների իրականացմանը:



«Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների կողմից ներկայացվել է ծրագրի ընդհանուր նկարագիրը՝ Գավառում անտառի համար նախատեսված տարածքը, տնկիների տեսակները, աշխատանքների ժամկետները, գործընթացի փուլերը եւ ծրագրի այլ մանրամասներ:

Շրջակա միջավայրի նախարարության «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Քրիստինե Հարությունյանը ներկայացրել է ՇՄԱԳ հաշվետվության մանրամասներ, որոնք վերաբերվում էին նախատեսվող գործունեության բնութագրին, ծրագրի իրականացման տարածքի բնական պայմաններին, շրջակա միջավայրի առանձին բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություններին, ինչպես նաեւ նախատեսվող բնապահպանական միջոցառումներին եւ մշտադիտարկման ծրագրերին:

Քրիստինե Հարությունյանը նաեւ մի քանի պարզաբանող հարցեր է ուղղել ՇՄԱԳ մասնագետ Սուսաննա Անտոնյանին: Վերջինս ներկայացրել է դրանց հետ կապված հիմնավորումներ:

Իրենց հետաքրքրող հարցերը հաշվետվության կազմողներին եւ ՇՄԱՓԿ-ի ՊՈԱԿ-ի ներկայացուցչին ուղղել են նաեւ հանրային լսման մասնակիցները:

Ըստ ծրագրի՝ անտառտնկման աշխատանքներն իրականացվելու են Գավառ քաղաքի նախկին օդանավակայանին հարող տարածքում, անօգտագործելի, քարքարոտ հողատարածքներում, 27,90 հեկտար տարածքի վրա: Տնկվելու են կաղնի, լեռնային թխկի, սոճի, վայրի տանձ եւ խնձոր ծառատեսակներ:

Անտառտնկման աշխատանքների մեկնարկը, ամենայն հավանականությամբ, կտրվի 2027 թվականի գարնանը:

ՕՎԻՆԱՐՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 3 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ



Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Օովինար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են խմելու եւ ոռոգման ջրատարների ներքին ցանցերի կառուցման եւ 4 փողոցների հիմնանորոգման աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրեց Օովինարի վարչական ղեկավար Արթուր Կարապետյանը, Օովինարի խմելու ջրատարի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 21 միլիոն 595 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է խմելու ջրատարի ներքին ցանցի կառուցում նորաստեղծ «Ալվաղ» թաղամասում, 500 մետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի սեպտեմբերի 20-ից եւ նոյեմբերի 17-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով:

Ծրագրի իրականացման արդյունքում նորաստեղծ թաղամասի տնտեսությունները կապահովվեն խմելու ջրի շուրջօրյա մատակարարմամբ:

Օովինարի ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 130 միլիոն դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ոռոգման ջրատարի ներքին ցանցի կառուցում Օովինարի 5 տարբեր փողոցներում, երկաթբետոնյա կիսախողովակներով, 1065 մետր ընդհանուր երկարությամբ:

Շինարարական աշխատանքները սկսվել են 2026 թվականի սեպտեմբերից եւ նոյեմբերի 18-ի դրությամբ իրականացվել շուրջ 80 տոկոսով: Աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել այս տարվա ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում 2027 թվականի ոռոգման շրջանի մեկնարկից ջուրը Օովինարի 150 տնտեսություններին կմատակարարվի անկորուստ ու ժամանակին:

Օովինարի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 187 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Օովինարի 4 փողոցների ասֆալտապատում, 2060 գծամետր ընդհանուր երկարությամբ եւ շուրջ 10 հազար քառակուսի մետր մակերեսով: Որոշ տեղերում տեղադրվում է ջրահեռացման համակարգ:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի սեպտեմբեր ամսին եւ նոյեմբերի 19-ի դրությամբ իրականացվել շուրջ 60 տոկոսով:

-2 փողոցներում դրանք ավարտված են, մնացած երկուսում գտնվում են ընթացքի մեջ: Ամենայն հավանականությամբ, կապված եղանակային անբարենպաստ պայմանների հետ, ասֆալտապատման աշխատանքները կշարունակվեն 2027 թվականի գարնանը,-ներկայացրեց Արթուր Կարապետյանը:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Շանթ Սեյրան» ՍՊԸ-ն:

«Գեղամա աշխարհ»



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ «ԷՐԱԶՄՈՒՅՑԱՆ ՕՐԵՐ»

Գավառի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները Եվրոպական Միության «Էրազմուս+» միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակում սովորում, դասավանդում եւ վերապատրաստման դասընթացների են մասնակցում գործընկեր եվրոպական բուհերում:

Ծրագրերին մասնակցած համալսարանականները «էրազմուսյան» օրերի շրջանակում հանդես են եկել հաշվետվություններով:

ԳՊՀ «Իրավագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Կարապետ Տոնոյանը եւ «Սերվիս» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Նանե Դավթյանը ներկայացրել են Հռոմի Սապիենզա համալսարանում իրենց ուսումնառության արդյունքները: Հաշվետվություններ են ներկայացրել «Իրավագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Էդվարդ Գրեյանը եւ Մկրտիչ Ապկարյանը Իսպանիայի Վալլադոլիդ համալսարանում, իսկ նույն կուրսի ուսանող Երվանդ Ավետիսյանը եւ «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի ուսանող Մովսես Մարգարյանը՝ Պորտուգալիայի Մինհոյի համալսարանում իրենց ուսումնառության մասին:

Իսպանիայի Կորդոբայի համալսարանում կրթության առանձնահատկություններին է անդրադարձել «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանող Դավիթ Հովակիմյանը, իսկ «Իրավագիտություն» բաժնի 3-րդ կուրսի ուսանող Վահե Դվոյանը կարեւորել է Իսպանիայի Ալմերիայի համալսարանում «ճկուն» հմտությունների զարգացմանը միտված ամառային դպրոցին մասնակցությունը:

ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը եւ արտաքին կապերի եւ լրատվության բաժնի վարիչ Լիլիթ Թոռչյանը ներկայացրել են Հռոմի Սապիենզայի համալսարանում կատարած իրենց դասախոսական աշխատանքը՝ նշելով առաջավոր փորձի փոխանակման կարեւորությունը:



Օտար լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Գայանե Միրիբյանը կիսվել է Իսպանիայի Կորդոբայի համալսարանի միջազգային շաբաթին իր մասնակցության տպավորություններով: Օտար լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս Սոնա Սիմոնյանը ներկայացրել է Պորտուգալիայի Ավեիրոյի համալսարանում իրականացրած դասախոսական աշխատանքը, իսկ Իրավագիտության ամբիոնի դասախոս Դանիել Մոսիկյանը՝ նույն համալսարանում անցկացված միջազգային շաբաթի արդյունքները: Իրավագիտության ամբիոնի դասախոս Լուսինե Բախտիկյանը ներկայացրել է Իսպանիայի Մուրսիա քաղաքի Սան Անտոնիո կաթոլիկ համալսարանում, իսկ Կենսաբանության, էկոլոգիայի եւ առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Լալա Մկրտչյանը՝ Վալյադոլիդի համալսարանում կայացած միջազգային շաբաթներին մասնակցության փորձը:

Ամփոփելով ուսանողների եւ դասախոսների հաշվետվությունների շարքը՝ ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանն ընդգծել է եվրոպական գործընկեր բուհերի հետ համագործակցության ուղեծրի ընդլայնման անհրաժեշտությունը:

ԳՊՀ արտաքին կապերի եւ լրատվության բաժին

23.qxd 22/11/2026 17:46 Page 3

ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ Է ՈՒՆԵՑԵԼ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԳ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ



Մասնագիտական կողմնորոշման եւ զինվորական կրթության նկատմամբ հետաքրքրության բարձրացման նպատակով Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի պետ, գեներալ-մայոր Արսեն Մանգասարյանը հանդիպումներ է ունեցել Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների ավագ տարիքի դպրոցականների հետ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, հանդիպումներին ներկա են եղել նաեւ հանրակրթական դպրոցների տնօրեններ, ՆԶՊ առարկան դասավանդող ուսուցիչներ:


Ռազմական ակադեմիայի պետը ներկաներին տեղեկատվություն է տրամադրել ռազմական ակադեմիայի գործունեության, ընդունելության պայմանների, զինվորական կրթություն ստանալու նոր հնարավորությունների եւ ոլորտում կատարված բարեփոխումների վերաբերյալ:

Անդրադարձ է կատարվել զինվորական մասնագիտության կարեւորությանը, հայրենիքին ծառայելու պատասխանատվությանը եւ ապագա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Հանդիպումներին ներկա են եղել նաեւ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Գեղարքունիքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Արմեն Մնացականյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչության պետի պարտականությունները կատարող Գեւորգ Գեւորգյանը, այլ պատասխանատուներ:

Հանդիպումների ընթացքում դպրոցականները հնարավորություն են ունեցել՝ զինվորականներին ուղղելու իրենց հետաքրքրող հարցերը, տեղեկություն ստանալ զինվորական կրթության առանձնահատկությունների մասին:

ԹԹՈՒՋՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՅԳԻ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ



ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Թթուջուր գյուղում ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են մարզական այգու կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, այն կառուցվում է վթարային վիճակում գտնվող ու արդեն քանդված մշակույթի տան շենքի տարածքում:

Թթուջրի մարզական այգու կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 67 միլիոն 940 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը: Այս պահին արդեն կատարված են հողի հարթեցման, մետաղական ցանկապատի կառուցման աշխատանքները:

Շինարարությունը կընթանա մինչեւ տարեվերջ ու կշարունակվի 2027 թվականի գարնանը, արեն ,Մասնակցային բյուջետավորումե գործընթացի շրջանակներում, 62 միլիոն 474 հազար դրամի ներդրմամբ:

Նախատեսվում է տվյալ տարածքում կառուցել նաեւ մանկական խաղահրապարակ եւ զբոսայգի:

ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքի թիվ 3 մանկապարտեզում ընթանում են շենքի ներքին ու արտաքին հարդարման եւ բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Ճամբարակի թիվ 3 մանկապարտեզի շենքի ներքին ու արտաքին հարդարման եւ բակային տարածքի բարեկարգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 13 միլիոն 242 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի օգոստոսից եւ կավարտվեն տարեվերջին: 2026 թվականի նոյեմբերի 13-ի դրությամբ շինարարությունն ավարտված է շուրջ 85 տոկոսով:

Ճամբարակի թիվ 3 մանկապարտեզի 3-րդ մասնաշենքը հիմնանորոգվել է 2025 թվականին, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 84 միլիոն դրամ, որի 80 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 20 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Ճամբարակի թիվ 3 մանկապարտեզը, որը գործում է քաղաքի կենտրոնական հատվածում, այժմ աշխատում է 6 խմբով, ուր հաճախում են 150 երեխա:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՀԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՐՔ Է ՄԱՏՈՒՑՎԵԼ ԱՆՎԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆ, ՊՐՈՖԵՍՈՐ ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ



Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի 75-ամյակն է հանդիսավորությամբ նշվել Գեղարքունիքի երկրագիտական թանգարանում, որը դարձել է հիշատակի տուրք վաստակաշատ լեզվաբանին եւ մանկավարժին՝ եւս մեկ անգամ արժեւորելով նրա գիտական գործունեությունը:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, Գեղարքունիքի երկրագիտական թանգարանը հյուրընկալել է Լալիկ Խաչատրյանի ընտանքի անդամներին, իր մայր բուհի՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ներկայացուցիչներին, գործընկերներին, լեզվաբանության տարբեր ուղղություններում նրա գործունեությունը գնահատողներին:

Անվանի լեզվաբանի գործունեության ու գիտական վաստակին նվիրված բանախոսությունները մեկնարկում են մանկավարժական համալսարանի ռեկտոր Արաքսիա Սվաջյանի՝ Լալիկ Խաչատրյանի 75-ամյակին նվիրված ուղերձի ընթերցմամբ: Ի թիվս լեզվաբանական եւ մանկավարժական լայնածավալ աշխատանքների, բուհի ռեկտորը բարձր է գնահատում Սփյուռքի հայ համայնքներում լեզվաբանի հայապահպան գործունեությունը՝ առանձնացնելով Իրանում եւ Սիրիայում վարած դասախոսությունները:

Այնուհետ գիտնականի անցած ճանապարհն ու եռնք բերած վաստակն արժեւորում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը, Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի ավագ գիտաշխատող Մարիեե Սեֆիլյանը, Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Լալիկ Խաչատրյանի կին Մարգուշ Միրումյանը:

Նրանց ներկայացմամբ՝ շուրջ մեկուկես տասնամյակ մայր բուհի՝ Հայոց լեզվի դասավանդման եւ մեթոդիկայի ամբիոնը ղեկավարած պրոֆեսորի գիտամանկավարժական աշխատանքի մեջ առանձնանում է Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի ղեկավարման շրջանը: Լաբորատորիան դառնում է բազմաթիվ գիտաժողովների, անվանի լեզվաբանների մասնակցությամբ գիտական տարբեր նախաձեռնությունների, լեզվաբանությանն ու դրա հիմնախնդիրներին նվիրված ժողովածուների ստեղծման կենտրոն: Մանկավարժ-լեզվաբանների տասնյակ սերունդներ կրթած Լալիկ Խաչատրյանի մասին հուշերը ամբողջացնում են նրա կերպարը՝ որպես գիտնականի, ընկերոջ, ընտանիքի հոր եւ ղեկավարի:

Պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի 75-ամյակի միջոցառումը նշանավորվում է նրան նվիրված ցուցադրության բացմամբ: Խաչատրյան ընտանիքի նախաձեռնությամբ եւ ցանկությամբ վաստակաշատ լեզվաբանի անձնական որոշ իրեր այսուհետ կպահպանվեն թանգարանում՝ այցելուներին ներկայացնելով կյանքը հայոց լեզվի տարբեր իրողությունների ուսումնասիրությանն ու հանրահռչակմանը նվիրած գիտնականին:

Անահիտ Կարեյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Թումանյան փողոցում ավարտվել են հիմնանորոգման աշխատանքները, որոնք իրականացվել են ՀՀ կառավարության կողմից 2026 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Թումանյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 24 միլիոն դրամ, որի 45 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 55 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է ճանապարհի երթեւեկելի մասի ասֆալտապատում, 120 մետր երկարությամբ, միակողմանի սալիկապատ մայթի կառուցում, ջրահեռացման համակարգի տեղադրում:

Շինարարական աշխատաքները սկսվել են 2026 թվականի հոկտեմբերից ու նոյեմբերի 6-ի դրությամբ գտնվում են ավարտական փուլում:

Առաջիկայում այստեղ կիրականացվեն ճանապարհի կահավորման եւ գծանշման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքներն իրականացրել են «Շանթ-Սեյրան» ՍՊԸ շինարարները:



23.qxd 22/11/2026 17:46 Page 4




/սկիզբը՝ էջ 1-ում/

Գեղհովիտի պատմության սկզբնավորման ժամանակներից մենք հեռացել ենք առնվազն 7 ու ավելի հազարամյակ, որոնց ընթացքում լույս աշխարհ եկած ու անցած սերունդները թողել են մի քանի քաղաքակրթությունների հետքեր, պատմամշակութային երեւելի արժեքներ:

Հավելենք, որ հեռավոր հնադարից մինչ նորագույն ժամանակները Գեղհովիտը գտնվել է քարավանային ճանապարհների հանգուցակետում, որտեղով անցել են մեծ կայսրությունների բանակները՝ պարսկական, սկյութական, ուրարտական, արաբական, բյուզանդական, սելջուկյան, մոնղոլական, ռուսական արշավանքների ժամանակ: Բնական է, որ ամեն մի աշխարհավեր ու կործանարար արշավանքների ժամանակ տեղի բնակչությունը ենթարկվել է ասպատակության ու բռնագաղթի, կրել անասելի տառապանքներ, ապրել եղերական դժնի ժամանակներ, սակայն ամեն արհավիրքից հետո այս շենն իր մեջ անասելի ուժ է գտել՝ կրկին մոխիրների ու արյան միջից հարություն առնելու համար:

Գեղհովիտը նաեւ ջրերի ուրույն թագավորություն է՝ գետերի, աղբյուրների մշտահոս ու անսպառ պաշարներով: Այն նաեւ անասնապահության համար հսկայական շտեմարան է՝ ալպյան հարուստ մարգագետիններով, մեղրատու բույսերով ու դեղաբույսեր հանդիսացող հարյուրավոր տեսակի ծաղիկներով: Ջրերում ու ցամաքում առատ է եղել նաեւ կենդանական աշխարհը, հանգամանքներ, որոնք միշտ մարդկանց պահել են այս գեղեցկագույն աշխարհի տիրույթներում:

Վերջին սոսկալի բռնագաղթին Գեղհովիտը ենթարկվել է 1605 թվականին, երբ պարսից Շահ Աբասը թուրքերի հետ անհաջող պատերազմից հետո իրականացված նահանջի ճանապարհին բռնի տեղահանել ու Իրանի խորքերն է տարել գյուղի ողջ բնակչությանը: Փրկվել են միայն նրանք, ովքեր հասցրել են պատսպարվել անառիկ լեռներում ու անմատչելի քարանձավներում:



Մեզանից ավագ սերնդի մարդիկ շատ վառ հիշում են ԽՍՀՄ բանակի տեղաշարժը Գեղհովիտ գյուղի միջով դեպի Իրան 1943 թվականին: Բյուզանդական բանակի արշավանքի ու Ալ-Բերդ ամրոցի կործանման մասին հիշատակել է միջնադարյան հայ նշանավոր մատենագիր Ասողիկը:

Գեղհովիտում մի քանի օր հանգրվանել են Քրիստոնեական վարդապետության նշանավոր քարոզիչ Մամասի մասունքները, ինչի մասին վկայում է միջնադարյան հայ պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Այլ խոսքով, Գեղհովիտի պատմական հարուստ միջավայրի մասին թեեւ ստեղծված է ստվարածավալ գրականություն, սակայն, կարծում ենք, որ այն ամբողջացնելու համար դեռեւս կարիք կա նոր ուսումնասիրություններ կատարելու, նոր գրքեր ստեղծելու համար:

Այս ուսումնասիրությունը մի համեստ փորձ է ընդամենը՝ ամբողջացնելու մինչ այս Գեղհովիտի պատմական միջավայրի մասին պատմող նյութերն ու տեղեկությունները, լրացնելու եւ ներկայացնելու հանրությանը քիչ հայտնի պատմագիտական հետազոտությունների արդյունքները, որոնք տարբեր ժամանակներում կատարվել են տարբեր հնագետների ու պատմաբանների կողմից:

ՍԵՎ ՍԱՐԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԸ

Սեւսար լեռը գտնվում է Գեղհովիտ գյուղից մոտ 15 կիլոմետր դեպի հարավ, Սեւան-Մարտունի-Գետափ միջպետական ճանապարհի արեւելյան կողմում, ծովի մակարդակից շուրջ 3063 մետր բարձրության վրա: Նրանից մի քանի կիլոմետր դեպի արեւմուտք բարձրանում է Արմաղան գեղատեսիլ լեռը: Այստեղից սկիզբ է առնում Սեւանա լիճ թափվող ամենաջրառատ գետի՝ Արգիճիի վտակներից մեկը, որը կրում է Գայլաձոր անունը:

Այս լեռնազանգվածը ոչ միայն Գեղամա աշխարհի, այլ նաեւ ողջ հայկական լեռնաշխարհի հրաշագեղ ու կախարդական եզերք հիշեցնող աշխարհ է, որի շրջագիծը գրավում է շուրջ 20 քառակուսի կիլոմետր տարածություն: Այն ունի մի քանի լեռնագագաթ, որոնք չորս կողմերից առանձակի վեհություն են հաղորդում լեռան ընդհանուր կառուցվածքին:

Տարվա մեծ մասը, նոյեմբերից մինչ հունիսն ընկած ժամանակահատվածում, Սեւսար լեռը թաղվում է ձյան հաստ շերտի տակ, ճերմակ գույնի մեջ, իսկ հունիս-սեպտեմբեր ամիսներին այն վառվռում է ծաղիկների անհամար գույների, ալպյան առատ բուսածածկույթի մեջ, ջրերերի սրընթաց վազքի ու հուժկու շառաչի տիրույթներում:

Երկնքին հպված լեռնակատարների ներքո անդնդախոր ձորերն են, ժայռեղեն կիրճերը, արագահոս գետակների հուները, աջուձախ սփռված քարացրոնները, երկնքի անհունի մեջ սավառնող արծիվներն ու բազեները, ոտքերիդ տակից հանկարծ անակնկալ թռչող լորերը, կաքավների կամ ճնճղուկների երամները:

Լեռան հյուսիսարեւելյան կողմում շառաչում են ջրվեժները, որոնք թափվում են գլխապտույտ բարձունքներից: Բայց ամեն տեղ չէ, որ քեզ կդիմավորի շքեղ բուսականությունը, հատկապես հարավարեւելյան ու հյուսիսարեւելյան կողմերի որոշ հատվածներ ոչ միայն հիմնովին բուսազուրկ են, այլ նաեւ փայլփլում են դեղնակարմիր, սպիտակ ու սեւ գույների մեջ: Դժվար չէ եզրակացնել, որ այս դեպքում մենք գործ ունենք բազմատեսակ հանքանյութեր պարունակող տարածքների հետ:

Սեւ սարի բարձունքերից սքանչելի համայնապատկեր է բացվում՝ հյուսիսից Սեւանա լճի ու նրա ափամերձ բնակավայրերի, արեւմուտքից՝ Արգիճիի սարահարթի ու Արմաղան լեռան վրա: Արեւոտ ու պարզ օրերին, ինչպես ափիդ մեջ, կենդանություն են առնում Մեծ ու Փոքր Մասիսները: Հարավից ձգվում են Վայոց Ձորի ու Սյունյաց աշխարհի բարձրաբերձ լեռնաշքաները:

Բնության այս անկրկնելի, մշտատրոփ հուշարձանի սրտում, սակայն, շատ ավելի հետաքրքիր, մարդու արարչագործ ոգու փայլատակումն արտացոլող պատմության հուշարձան կա, որը գտնվում է Սեւսար լեռան հյուսիսային լանջին, ծովի մակերեւույթից 2700 մետր բարձրության վրա: Այն իրենից ներկայացնում է որպես նախնադարյան մարդու տիեզերագիտական իմացությունները պատկերող բացառիկ «Աստղադիտարան», որտեղ պատկերված են կենդանակերպի համաստեղությունները:

Ժայռապատկերները դրոշմված են 2 մեծ, իրար կողքի ընկած սալաքարերի վրա: Պատկերների կենտրոնում արեւի ժամացույցն է, որի շուրջ զետեղված են կենդանակերպի համաստեղությունների եւ երկնային այլ մարմինների սիմվոլիկ պատկերները: Այստեղ կան նաեւ մարդ-հսկաների պատկերներ: Ուշագրավ է արեգակնային ժամացույցի օրը 12 մասերի բաժանված լինելը, որը խորհրդանշում է գիշերվա եւ ցերեկվա 12 ժամերը:

Այս հուշարձանի մասին ժամանակին տողերիս հեղինակին հոդված է տրամադրել հայտնի հնագետ, պատմաբան Վարշամ Ավետյանը, որը հրապարակվել է «Գեղամա աշխարհ» թերթում:

Ըստ Վարշամ Ավետյանի՝ «Աստղադիտարանի» արեւելակողմյան ձորակում նկատելի են կլոր եւ քառանկյուն հատակագծերով բնակարանների կամ կացարանների փլվածքներ եւ դրանց շրջափակող պարիսպների մնացորդներ, որոնք, հավանաբար, համարվում են հին աստղագետների կամ աստղագուշակների բնակատեղին:

«Աստղադիտարան կոչված այս վայրի երկնային մարմիններ պատկերող ժայռապատկերները դրոշմված են կողք կողքի դրված երկու սալաքարերի վրա: Պատկերների կենտրոնում արեւի ժամացույցն է, իսկ դրա շուրջբոլորը զետեղված են կենդանակերպի համաստեղություններ եւ երկնային այլ մարմինների խորհրդանշային պատկերներ:

Հետաքրքրական այն է, որ նշված պատկերներից ոչ հեռու, տարբեր ուղղությունների վրա կան նույն հավաքական պատկերների առանձին նմուշներ, որոնք ըստ էության ցույց են տալիս համաստեղությունների ուղղությունները:

Աստղադիտարան կոչված այս վայրը, կարելի է ասել, եղել է գիտական կենտրոն, որը գտնվում է Իշխանագետի /Արգիճի/ կամ Թմբուկայրի/Նաղարախան/ սարահարթի արեւելյան ծայրամասում, որի արեւմտյան վերջավորությունում՝ մեր կողմից անվանված Աղավնասարի վրա, հանքային աղբյուրից քիչ հեռու, կան մարդկանց ու աղավնու հսկա քանդակներ: Ուշագրավ ընդհանրություններ են նկատվում հորինվածքային ժայռապատկերախմբերի եւ հայկական հնագույն տոմարի միջեւ:

Դեռեւս 19-րդ դարում եւրոպացի նշանավոր աստղագետներ Օլկոտը եւ Մաունդերն այն հիմնավոր ու ընդունելի կարծիքն էին հայտնել, որ կենդանակերպի տասներկու համաստեղության ընկալումը եւ անվանումները կարող էին տալ միայն այն մարդիկ, որոնք ապրել են 36-42 աստիճանների միջեւ, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհում: Եվ քանի որ կենդանակերպի համաստեղություններով է պայմանավորված արեգակնային տարին, տարին 12 ամիսների



բաժանելը կարծես թե նույն մարդկանց գաղափարն է:

Ահա այս առանձնահատկությամբ կարող ենք ասել, որ Գեղհովիտի «Աստղադիտարանի» ժայռապատկերներ կերտողները եւ հայկական տոմար ստեղծողները նույն մարդիկ են: Որովհետեւ Հայկական հնագույն տոմարում եւս տարին բաժանված է 12 ամիսների՝ 30 օրերով, եւ 5 օր ունեցող մեկ ամիս, որը կոչվել է Հավելյաց ամիս:

Երկրորդ ընդհանրությունը ժամերի բաժանումն է: Արեգակնային ժամացույցի վրա օրը բաժանվում է 12 մասերի, որոնք նշում են ցերեկվա ու գիշերվա ժամերը: Այսինքն՝ օրն ունի 24 ժամ, որն առկա է նաեւ հնագույն Հայկական տոմարում, ուր ամեն մի ժամ ունի իր անվանումը՝ Այգ, Ցայգ, Վաղվաղակի, Շաղավոտն եւ այլն...

Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ Գեղհովիտի «Աստղադիտարան»-ժայռապատկերում նշված են տարվա չորս եղանակները, անգամ՝ րոպեները:

Ժամանակագրորեն եւս «Աստղադիտարանի» ժայռապատկերները համաձայնում են հին Հայկական տոմարին: Դատելով շրջակա ժայռապատկերներից եւ բնակատեղիի հնագիտական նյութերի մնացորդներից , որոնք վերաբերում են Ք. Ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսին, ճիշտ այն ժամանակին, որում դրվում է նաեւ Հայկական տոմարի ստեղծումը:

Ըստ գրավոր աղբյուրների՝ Հայկական տոմարը կապված է Հայկ Նահապետի անվան հետ, եւ սկիզբը համարվում է այն պահը, երբ Հայկյան նետից սպանվել է բռնակալ Բելը:

Դեւոնդ Ալիշանի տոմարագիտական հաշվարկներով՝ այդ պահը Ք.Ա. 2492 թվականի օգոստոսի 11-ն է, այսինքն՝ 3-րդ հազարամյակի երկրորդ կեսի սկիզբը,- եզրակացնում է Վարշամ Ավետյանը:

/շարունակությունը էջ 5-ում/




23.qxd 22/11/2026 17:46 Page 5

/սկիզբը՝ էջ 4-ում/

Սեւ Սարի «Աստղադիտարանի» պատմական միջավայրի մասին հետաքրքիր տվյալներ է հաղորդում նաեւ Գեղհովիտ գյուղի նախկին բնակիչ, լրագրող, Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի Քաշաթաղի շրջանի «Մերան» թերթի հիմնադիր խմբագիր, լրագրող Զոհրաբ Ըռքոյանը

Ըստ Զոհրաբ Ըռքոյանի՝ Սեւսար լեռան հյուսիսարեւելյան ստորոտում՝ ծովի մակերեւույթից 2500-2700 մետր բարձրության վրա, ավելի քան 70 հեկտար տարածքում կան ժայռապատկերներ, բնակավայրի հետքեր, դամբարաններ, հնադարյան մարդու թողած այլ հետքեր: Ի տարբերություն «Աստղադիտարանն» ուսումնասիրած շատ գիտնականների, ովքեր այն համարում են երկու սալաքարերի ամբողջություն, Զոհրաբ Ըռքոյանը որպես «Աստղադիտարան» է ներկայացնում 3 քարերի համալիր ժայռապատկերը:

«Կենտրոնական քարը, որի վրա տարբեր պատկերներ են քանդակված, ուսումնասիրողների կողմից համարվում է երկնքի քարտեզ: Իհարկե, կարծիքները տարբեր են, բայց մոտ 6 ք/մ մակերեսով քարի վրայի քանդակները ցանկացած մարդու հուշում են՝ այն իր ժամանակի կարեւոր գիտական կենտրոններից է եղել, եւ միակն է ողջ Հայաստանում, հնարավոր է՝ ամբողջ աշխարհում: Երեք քարաբեկորները, որոնց վրա է համալիր քանդակը, գտնվում են մեր՝ տեղացիների կողմից «Կազոնի գուփ-փոս» կոչվող լայնահուն ձորակի հարավարեւելյան ոչ





բարձր բլրակի վրա: Տարածքում կան տասնյակ այլ ժայռապատկերներ: Բացի աստղադիտարանից, որն է հնավայրում հիմնականում այցելուների եւ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, կան ուսումնասիրման ենթակա այլ օբյեկտներ եւս: Սեւսարի հյուսիսարեւելյան ստորոտում է գտնվում Գեղհովիտի «Զոզներ» կոչվող ամառանոց-յայլան, որտեղ ամռանը գալիս էին՝ անասունները պահելու նպատակով: Քեռիս էլ ամառներն այստեղ էր անցկացնում ու լավ տեղյակ էր հնավայրի ժայռապատկերների մասին: Հնավայրի տարածքում կան նաեւ բավականին մեծ չափերով քարաժայռեր: Նույն օրը բարձրացանք նաեւ Սեւ սարի գագաթը, որտեղից մի հետաքրքիր տեսարան նկատեցի: Նշված քարաժայռերի մի շարան՝ 6 քար, գտնվում են մի շարքի վրա՝ միմյանցից գրեթե հավասար հեռավորությամբ: Առաջին հայացքից՝ դրանք քարեր են ծորալանջի: Նշված քարերը գտնվում են աստղադիտարանից հյուսիս-արեւելք՝ «Կազոնի գուփ» ձորակի հարավային լանջին՝ արեւելք-արեւմուտք ուղղությամբ: Վերջին՝ արեւմտյան քարը, որը մնացածից համեմատաբար ավելի մեծ է, տակը պատվանդաններ ունի: Այն 2 մեծ քարի վրա է: Կրտսեր եղբորս որդին՝ Միերը, հանգիստ անցավ քարի տակով: Իսկ ավագ եղբորս թոռնուհին՝ Մերին, ուրախ-ուրախ կանչեց. օձի քանդակ էր տեսել մոտակա քարին: Հողի մեջ է օձաքանդակ քարի մի մասը, իսկ վերին հատվածում օձ-վիշապ է քանդակված: Հետաքրքիր է՝ նույն օձի քանդակը կա նաեւ աստղադիտարանի գլխավոր քարի արեւելյան կողմի, այլ քարերի վրա: Մեծ քարերի շարանը նույնպես պետք է դառնա ուսումնասիրման առարկա: Հնարավոր չէ, որ քարերը բնականորեն են նույն շարքում հայտնվել, ու վերջինն ունի պատվանդան, որի տակավ մարդը կարող է անցնել:

Նշված «Կազոնի գուփ» ձորակի հյուսիսային լանջին մի ժայռ կա, որի վրա դարձյալ եռաշարք 12 փոսորակ է քանդակված: Գիտնական-ուսումնասիրողների գործն է՝ ճշտել՝ այս քարը կապ ու՞նի արդյոք «Աստղադիտարանի» հետ: Ամեն դեպքում հավատացած եմ՝ աշխարհում եզակի այս հնավայրը, որի կենտրոնական հուշարձան-«Աստղադիտարանը», ըստ գիտնականների, ունի մոտ 18 հազար տարվա պատմություն, լուրջ ուսումնասիրման ու առավել հռչակման կարիք ունի»,-գրում է Զոհրաբ Ըռքոյանը

Այս խորհրդավոր պատկերների լեզուն առավել լավ կըմբռնեն նրանք, ովքեր երբեւէ առիթ կունենան՝ անամպ գիշերներին Սեւ Սարի գագաթներից դիտելու աստղերի բոցավառ փայլը: Երկնքի անհունի մեջ սփռված աստղերը, ամենատարբեր համաստեղություններ կազմած, տիեզերական հեռավորություններից մարդկային աչքին երեւում են շատ հստակ, զարմանահրաշ ու գրավիչ, ընթեռնելի ու սիրելի: Տասնյակ հազարավոր ու շատ ավելի տարիներ առաջ էլ մարդ արարածը երկնքին մոտիկ այս բարձունքներից դիտել է աստղերի փայլը, փորձել թարգմանել նրանց խորհուրդը, գուշակել իր կյանքի ճակատագրի ընթացքը, ապրած ու գալիք ժամանակների գաղտնքիները, ցերեկվա ու գիշերվա հաստատուն շարժերը, լույսի ու խավարի հակադրությունների իմաստը, կարդալ տիեզերքի լեզուն աստղաթարթերի կախարդական ակնթարթների մեջ:

Կենդանակերպի այդ նշաններն էլ դաջվել են այս քարերին՝ վկայելով մեր հեռավոր նախնիների տիեզերական գիտելիքների մասին: Այս նույն վայրից մի քանի կիլոմետր հեռավորությամբ էլ Քարաձի բնակավայրի տարածքում անցած դարի վերջերին գտնվեց ու կանգնեցվեց ցլալկերպ վիշապաքարի կոթողը, որը հանդիսանում է Հին Հայաստանի հեթանոսական մշակույթի խոսուն վկաներից մեկը՝ կերտված մեզանից ավելի քան 4-5 հազար տարի առաջ: Բնական է, որ այս ամենը կապվում է նախեւառաջ Հին աշխարհի հավատալիքների հետ, իսկ դրանց ծագման ակունքները, բնականաբար, գալիս են նախեւառաջ աստղերից, տիեզերական անքննելի ազդակներից:

Հին աշխարհի աստղագիտությունը քրմերի մենաշնորհն էր, ովքեր այն ուղղակիորեն զուգակցում էին աստղագուշակության ու տոմարագիտության հետ:

Այս առումով էլ Սեւ Սար լեռը պետք է համարել հայ ժողովրդի պաշտամունքային ու սրբազան լեռներից մեկը:

/շարունակելի/

Խոսրով Խլղաթյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ԼԻԳԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

ՀՀ Վարչապետի հովանու ներքո Գեղարքունիքի մարզում ավարտվեց «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մրցումների համայնքային փուլի մեկնարկը:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, մրցաշարն անցկացվում է 6-7-րդ եւ 8-9-րդ դասարանների աշակերտների միջեւ:

Գեղարքունիքի մարզում առաջինը մրցապայքարի մեջ են մտել Մարտունու համայնքային փուլին հայտ ներկայացրած 24 դպրոցական թիմեր:

Այս փուլի 1-ին տարիքային խմբի մրցումներն անցկացվել է նոյեմբերի 5-ին՝ Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի մարզադահլիճում: Այստեղ ուժեղագույնը Ներքին Գետաշենի Ա. Եղիազարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմն է: Երկրորդ եւ երրորդ հորիզոնականները զբաղեցրել են համապատասխանաբար Վերին Գետաշենի թիվ 1 եւ Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցների թիմերը: Հաջորդ օրը մրցապայքարի մեջ են մտել 2-րդ տարիքային խմբում հայտավորված թիմերը, որի արդյունքում հաղթող է ճանաչվել Ծովինարի Արծրուն Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Աստղաձորի միջնակարգ, իսկ երրորդ հորիզոնականը՝ Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցների թիմերը:

Ճամբարակի համայնքային փուլի երկու տարիքային խմբերում մասնակցության հայտ են ներկայացրել 15 դպրոցական թիմեր: Այս փուլը մեկնարկել է նոյեմբերի 7-ին՝ Ճամբարակի ավագ դպրոցի մարզադահլիճում:

Մրցապայքարի մեջ են մտել 1-ին տարիքային խմբում հայտ ներկայացրած դպրոցական թիմերը: Արդյունքում առաջին տեղը գրավել է Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը, երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Ճամբարակի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը, իսկ երրորդ տեղը բաժին է հասել Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի թիմին: Նոյեմբերի 8-ին մրցապայքարը շարունակել են 2-րդ տարիքային խմբի թիմերը: Այստեղ ուժեղագույնը Արտանիշի միջնակարգ դպրոցի թիմն էր: Երկրորդ տեղը բաժին է հասել Ջիլի միջնակարգ դպրոցի թիմին, իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրել է Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը:

Սեւանի համայնքում 1-ին տարիքային խմբում /6-7-րդ դասարաններ/ իրենց մասնակցությունն են ներկայացրել համայնքի 7 դպրոցների հավաքական թիմերը:

2-րդ տարիքային խմբում /8-9-րդ դասարաններ/ իրենց մասնակցությունն են ներկայացրել 13 դպրոցի հավաքական թիմերը:

Առաջին տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Սեւանի Մ. Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոցի հավաքական թիմը: 2-րդ տեղը գրավել է Վլ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոցի հավաքական թիմը, 3- րդ տեղը՝ Յա. Զարոբյանի անվան N2 հիմնական դպրոցի հավաքական թիմը:

Երկրորդ տարիքային խմբում 1-ին տեղը գրավել է Մ. Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոցի հավաքական թիմը: 2-րդ տեղը գրավել է N5 միջնակարգ դպրոցի հավաքական թիմը, 3-րդ տեղը՝ N 4 հիմնական դպրոցի հավաքական թիմը:



Այս երկու տարիքային խմբերում 1-ին տեղ գրաված թիմերը նվաճել են մարզային փուլին մասնակցելու իրավունք:

Վարդենիս համայնքում տարիքային առաջին խմբում, 6-7-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ, 1-ին տեղը գրավել է Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը: մրցանակային 2-րդ տեղը բաժին է հասել Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոցի թիմին, 3-րդ տեղը՝ Շատջրեքի միջնակարգ դպրոցի թիմին:

2-րդ տարիքային խմբում, 8-9-րդ դասարանների մրցապայքարում, դարձյալ հաղթող է ճանաչվել Լուսակունքի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը գրավել է Գեղամասարի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը:

Գավառ համայնքում տարիքային առաջին խմբում, 6-7-րդ դասարանների մրցապայքարում, հաղթող է ճանաչվել Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել է Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Գանձակի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը:

Տարիքային երկրորդ խմբում, 8-9-րդ դասարանների մրցապայքարում, կրկին հաղթող է ճանաչվել գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ տեղը գրավել է Նորատուսի թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Գավառի թիվ 4 հիմնական դպրոցի թիմը:

Մրցանակային տեղեր գրաված թիմերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր:

Համայնքային փուլում առաջին տեղ գրաված թիմերը կմասնակցեն մարզային փուլի մրցումներին, որոնք կանցկացվեն Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում, նոյեմբերի 27-28-ին:

«Գեղամա աշխարհ»

23.qxd 22/11/2026 17:46 Page 6

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՒՇԵՂՅԱՆ . ՄԵԼԻՔ ՊԵՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ՏՈՀՄԻ ԵՎ ԻՄ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Իվանի Մուշեղյանը ծնվել է Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղում, 1922 թվականի նոյեմբերի 11-ին: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետ ձեռք է բերել տրակտորիստի մասնագիտություն ու աշխատանքի անցել հարազատ գյուղի նորաստեղծ կոլտնտեսությունում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Խորհրդային բանակի կազմում մարտնչել Տուապսեում, որտեղ եւ ծանր վիրավորում ստացել ու զորացրվել է 1943 թվականին: Վերադառնալով հայրենի գյուղ՝ Հովհաննես անցել է խաղաղ ու հանրօգուտ աշխատանքի Մարտունու մեքենատրակտորային կայանում՝ միաժամանակ կազմելով ընտանիք ու հոգալով նրա բոլոր հոգսերը: Համագյուղացի Ռոզայի հետ կազմած ընտանիքում ծնվել, դաստիարակվել ու հասակ են առել երեք որդի՝ Վազգենը, Զավենը եւ Սամվելը:

1959 թվականին լուծարվում է Մարտունու մեքենատրակտորային կայանը, որից հետո Հովհաննես Մուշեղյանն աշխատանքի է անցնում Մարտունու Շրջկոոպում՝ ավագ վերահսկիչի պաշտոնում: Այստեղ մի քանի տարի աշխատելուց հետո անցել է վաստակած հանգստի: Մահացել է 1983 թվականին, 61 տարեկան հասակում:

Չունենալով բանասերի կամ պատմաբանի կրթություն՝ Հովհաննես Մուշեղյանն իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում իրեն նվիրել էր հայ գրականության ու պատմության հարուստ էջերի ընթերցանությանն ու ուսումնասիրմանը: Ավելին, ձեռքի հետ արտագրել է «Աշոտ Երկաթ» եւ «Ճակատագիրն Հայոց» պատմավեպերը շատ գեղեցիկ, պատկերազարդ կազմի մեջ: Այնքան գեղեցիկ ձեռագրով են արտագրված այդ վեպերը, որ ընթերցողին թվում է, թե գործ ունի ոչ թե ձեռագիր, այլ տպագիր գրքերի հետ:

Բացի այդ, նա ունեցել է ստեղծագործելու անուրանալի ու շնորհալի ձիրք՝ ամենայն խնամքով շարադրելով իր տոհմի ու կյանքի պատմությունը մեկ ընդհանուր մատյանի մեջ:

Նա գրողի անուրանալի ձիրք է դրսեւորել նաեւ «Մի ընտանիքի ողբերգություն» վիպակում՝ հուզական, պարզ ու անպաճուճ լեզվով ներկայացնելով Բայբուրդ քաղաքում 1915 թվականին սրի քաշված հայ ընտանիքի պատմությունը, հրաշքով կոտորածից փրկված նույն ընտանիքի անդամ Մարտիրոսի կյանքի ոդիսականը: Ընդ որում, Հովհաննեսն այդ պատմությունը գրառել ու թղթին է հանձնել 1979 թվականին, Երեւանի հիվանդանոցում բուժում ստանալու ժամանակ՝ լսելով իր հետ հիվանդանոցի նույն պալատում պառկած ութսունամյա Մարտիրոսից:

Տրակտորիստի ու հաշվապահի դժվարին աշխատանքի մեջ նա ոչ մի ակնթարթ չի բաժանվել գրից ու գրականությունից, հայրենի երկրի պատմությունից, ստեղծագործական աշխատանքից, թեեւ դրանք, թեկուզ թերթերում, տպագրության հանձնելու ոչ մի փորձ չի ձեռնարկել:

Հովհաննես Մուշեղյանը հարազատ տոհմի ու իր կյանքի պատմությունը շարադրել է պարզ ու անպաճուճ լեզվով, պատկերավոր նկարագրությամբ, դեպքերի ու իրադարձությունների, կերպարների բազմազանությամբ:

Ընթերցողը պատկերացում է կազմում ԽՍՀՄ կազմում ընդգրկված գյուղի մարդկանց դժվարին կենցաղի, տառապանքով լի կյանքի, մարդկանց ունեզրկման, պատերազմների բերած արհավիրքների, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի ձգտումների, հայրենակերտման բարդագույն ընթացքի մասին:

Հովհաննես Մուշեղյանը սերում է Մելիք Պետրոս Պահլավունու տոհմից, ով Արեւմտյան Հայաստանի Ալաշկերտ Գավառի Կումլիպուճախ գյուղից 1830 թվականին գաղթել ու բնակություն է հաստատել Սեւանա լճի հարավային ափին, ներկայիս Աստղաձոր գյուղում՝ իր հետ բերելով



տպագիր երկու Սուրբ գիրք՝ Նոր Կտակարանը եւ Նարեկը: Մինչ օրս նրա զարմերից Մուշեղ Սիմոնյանի տանը պահվում է այն Պատվո շքանշանը, որ 1830 թվականին ռուսաց Նիկոլայ Առաջին ցարի կողմից շնորհվել է Մելիք Պետրոս Պահլավունուն, բնական է, ռուսական բանակի շարքերում թշնամու դեմ վեհանձնաբար մարտնչելու ու նշանակալի ծառայություններ մատուցելու համար:

Ամեն դեպքում, նրա հոգում մշտարթուն է եղել ազնվական ծագման գաղափարը, նա միշտ հպարտ ու փառավոր է զգացել իրեն՝ Պահլավունիների ազնվական արյունն իր մեջ կրելու համար:

Այս ձեռագիր մատյանը «Գեղամա աշխարհի» թերթի խմբագրությանն է հանձնել Հովհաննես Մուշեղյանի կրտսեր որդի Սամվելը՝ այն պարզապես փրկելով մոռացության փականքներից ու հանձնելով ընթերցողների դատին եւ դարձնելով հանրության հոգեւոր սեփականությունը:

Ձեռագիր մատյանը կազմվել է 1980 թվականին, հեղինակի կյանքի 58-րդ տարում:

Խոսրով Խլղաթյան

Ոչ թե պետք է պահել ազգի մոխիրը, այլ պետք է նրա մոխիրների միջից հայտնաբերած կայծերը բոցավառել եւ դարձնել ամնարելի ջահ եւ պահել ապագա սերունդների ճանապարհը լուսավորելու եւ նրանց հոգին ջերմացնելու համար:

Հովհաննես Մուշեղյան

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իմ մանկությունից շատ քիչ բան եմ հիշում, որովհետեւ այն անցավ այնքան շուտ, այնքան դատարկ կերպով, որից մեջս այնքան էլ շատ բան չի տպավորվել:

Բայց երբ մտաբերում եմ անցյալը, իմ գիժ, արկածներով լի անցյալը, դրանք երեւում են ընդամենը երեխայական անմեղ տեսիլներով: Ահա, մեկը մյուսին հաջորդելով, հանդես են գալիս ծանոթ ու անմոռանալի պատկերները:

Ես տեսնում եմ մեր ժառանգական բարձրասլաց ուռիներով շրջապատված, երբեմնի ծաղկազարդ հողամասը, որի մեջ փարթամորեն աճում էին գարին ու ցորենը, առվույտն ու կանաչը, սոխն ու բողկը եւ հազար ու մի բուրմունք տարածող ծաղիկները: Մեր բախչան մեզ ժառանգվել էր 1830 թվականից, որը, որպես ժառանգական սեփականություն, շնորհվել էր մեր նախապապ Մելիք Պետրոս Պահլավունուն:

1828-1829 թվականներին բռնկվել էր ռուս-թուրքական պատերազմը: Ռուսական բանակը մտել էր Արեւմտյան Հայաստան, գրավել Կարսը, Ալաշկերտի դաշտը, Բայազետը: Մելիք Պետրոս Պահլավունին, բազմաթիվ հայ կամավորների հետ զինվորագրվել է ռուսական բանակին: Մինչ ռուսների հարձակումը նա կազմել առանձին ջոկատ, գաղտնի զինել նրանց ու բարձրացրել անմատչելի լեռներ, որտեղից հաճախակի հարձակվել է թուրք-քրդական զինված կազմավորումների վրա՝ ահուսարսափի մեջ պահելով նրանց: Սակայն, երբ զգացել է, որ հայտնվում է պաշարման օղակի մեջ, նա որոշել է հարձակումով ճեղքել այդ օղակը, կտրել հարյուրավոր կիլոմետրեր ու իր ջոկատով միանալ ռուսական բանակին՝ նրա մեջ տեսնելով հայ ժողովրդի՝ դարերով երազած փրկությունը:

Ճիշտ է, Մելիք Պետրոս Պահլավունին երկար ժամանակ կռվել է թուրքերի ու քրդերի դեմ, ռուսական բանակի կազմում նրանցից մաքրել իր հայրենի ոստանը, սակայն ստիպված է եղել բռնել գաղթի ճանապարհը, քանի որ ռուսները գրավված տարածքները նորից հետ են վերադարձրել թուրքերին՝ տեղի հայերին դնելով թուրք-քրդական վրիժառու սրի տակ: Նրանց այլ բան չէր մնում անելու, քան նահանջող ռուսական բանակի հետ Արեւելյան Հայաստան բնակության տեղափոխվելու:

Մելիք Պետրոս Պահլավունին ռուսական բանակում ունեցել է աչքի ընկնող ծառայություն, որի համար Նիկոլայ ցարի կողմից պարգեւատրվել է **«Խիզախության համար»** մեդալով:

Բացի այդ, նրան շնորհվում է տանուտերի պաշտոն:

Մելիք Պետրոս Պահլավունին սկզբում նախընտրել է բնակվել Թիֆլիս քաղաքի Հավլաբար թաղամասում, ուր մի կարճ ժամանակ մնալուց հետո որոշում է տեղափոխվել Սեւանա լճի ավազան: Նա անցնում է Դիլիջանով ու հասնում Գեղամա գեղածիծաղ ծովակին:

Գյուղը գտնվում է ծովակից երկու վերստ հեռավորության վրա, դեպի հարավ մի բարձրավանդակի վրա ու իր բարձրությամբ իշխում է իր դիմացը տարածվող բերրի ու հարթ հողատարածությունների վրա: Գյուղի արեւմտյան կողմով մինչեւ Գյուգուրմազ կոչվող լեռը ձգվում է մի ձորակ, որի միջով հոսում է մի բարակ գետակ, որը, քսվելով բնության կողմից կերտված քարե պատնեշներին, քրքջալով հոսում է ներքեւ ու լեռներից բերած սառնորակ ջրերը խառնում Գեղամա ծովակի պարզ ու հայելանման ջրերին:

Ու քանի որ Սեւանի ավազանի գյուղերը երկար ժամանակ եղել են անմարդաբնակ, իշխան, կողակ ու այլ ձկնատեսակները բազմացել են այնքան, որ, լճից բացի, լցրել են նույնիսկ գետերն ու գետակները, առուներն ու աղբյուրները: Մեր մեծերի պատմելով՝ ձուկն այնքան առատ է եղել 1830-ական թվականներին, որ դրանց որսալու համար ուռկան չի գործադրվել: Դրա համար ընդամենը բավական է եղել, որ մարդիկ աղբյուրների կամ գետակների մեջ մտցնեն դույլերը՝ ջուր վերցնելու նպատակով, որի ընթացքում էլ ձկները վտառներով լցվել են դույլերի կամ այլ ամանների մեջ: Փաստորեն, մարդիկ կարողացել են վայելել Սեւանի համեղ ձուկը՝ գրեթե առանց փողի ու մեծ ջանքեր գործադրելու:

Այդ է թերեւս եղել հիմնական պատճառներից մեկը, որ նրանք որոշել են բնակության վայր ընտրել Սեւանի առափնյա գյուղերը: Մելիք Պետրոս Պահլավունին էլ ընտրել է թուրքերի կողմից բնակավայրին տրված Ալիղըռըղ անունը, որն այժմ կրում է Աստղաձոր բարեհունչ, հայեցի անվանումը:

Ի դեպ, թուրքական Ալիղըռըղ անվանումը շատ դիպուկ է ներկայացնում այն արհավիրքի պատկերը, որը մեր գյուղի հայ բնակչության գլխին բերել են քոչվոր ավարառու թյուրքական ցեղերը: Ալի Ղըռըղ՝ նշանակում է՝ Ալին բնաջնջեց, ամեն ինչ վերածեց ամայության:

Հիմնավորվելով ներկայիս Աստղաձորում՝ Մելիք Պետրոսը սկսում է որոնել իր ազգականներին, որպեսզի նրանց բնակության տեղափոխի իր գյուղ: Երկար որոնումներից հետո նա գտնում է Կումլիպուճախում նախկինում բնակված մի քանի տնտեսությունների ու տեղափոխում իր մոտ: Նրանցից էլ սերվել են այսօրվա Հոխեյի, Փուրթոյի ու Քոչեի տները:

Բավական է ասել, որ 1831 թվականին մեր գյուղն ունեցել է ընդամենը 7 ծուխ՝ բոլորն էլ Ալաշկերտից գաղթած:

Մելիք Պետրոսն ունեցել է ազգականներ, հարազատներ, քույրեր ու եղբայրներ, որոնց մասին, ցավոք սրտի, մեզ տեղեկություններ չեն հասել: Մի բան միայն հայտնի, որ մեր պապն ունեցել է մեծ ազգատոհմ, բազում հարստություն, կայք ու կարողություն, որի մեծ մասը, բնական է, մնացել է Էրգրում: Մեկ էլ հայտնի է, որ նրա ազգատոհմը կրել է նաեւ Ալոյան ազգանունը:

Դժվար է ասել, թե որքան հարստություն է իր հետ բերել Մելիք Պետրոսը, քանի շնչով է նա հաստատվել իր նոր հայրենիքում: Միայն մի բան է հայտնի, որ նա Աստղաձոր է եկել մեն-մենակ, առանց ազգականների: Չենք բացառում, որ նրա ազգականներն ու ընտանիքի անդամները Արեւմտյան Հայաստանում թուրքերի ու քրդերի կողմից ենթարկված լինեն սպանդի:

Հազարաշեն տունը, որը հատկացվել է նրան, կանգուն է մինչ օրս՝ Աստղաձոր գետակի աջ ափի բարձունքին: Այդ տանն են պահվել էրգրից բերված Սուրբ գրքերը, այդ տանն են հասակ առել մեր տոհմի ավագները՝ Սիմոնն ու իր հինգ որդիները:

Ստանձնելով տանուտերի պաշտոնը՝ Մելիք Պետրոսը ժամանակին հոգացել ու կարգավորել է տերունական գործերը, օգնել ու կարգավորել գյուղում առաջացած անկարգությունները, հոգ է տարել հողային հարցերը արդարացի լուծելուն, ժողովրդի համար եղել է հոգատար հայր ու կառավարիչ:

Նա հողաբաժանությունը շատ հեշտությամբ է կատարել, քանի որ մատների վրա հաշվվող ծխեր ունեցող գյուղն այդ ժամանակ ունեցել է անսահմանափակ հողատարածքներ: Կարելի է ասել, որ ով այդ ժամանակ որքան ցանկացել, այնքան էլ հող է մշակել կամ դաշտեր հնձել:

Մելիք Պետրոսն իր բնակարանի դիմաց ընկած մի քանի օրավար տարածքն առանձնացրել է, պարսպապատել, ուռի ծառեր տնկել ու այն դարձրել իր պարտեզը՝ բնազմաթիվ պտղատու ծառեր տնկելով:

Տարիներ անց նրա տնկած ծառերը հասակ են նետել, բերք ու բարիք տվել, ամռան տապին հով ու շուք արել իր ընտանիքի անդամների համար, ու այդ բարիքներն իր աչքով տեսել, վայելել է նաեւ ինքը:

Մելիք Պետրոսի գերդաստանի հարստության մասին բանավոր զրույցները հասել են մեզ: Նաեւ մեր մեծերը պատմել են այն մասին, թե ինչ պատճառով է փոշիացվել այդ անտակ հարստությունը: Ըստ այդ զրույցների՝ գյուղում համաճարակ է բռնկվել, որի հետեւանքով բազմաթիվ մարդկ են մահացել: Մելիք Պետրոսին ցարական կառավարությունը մեղադրել է այն բանի համար, որ նա իբր ժամանակին իշխանություններին չի տեղեկացրել մահաբեր համաճարակի մասին: Մեղադրանքն էլ ավարտվել է կալանավորումով ու աքսորի սպառնալիքով:

Բանտից ու աքսորից ազատվելու համար էլ Մելիք Պետրոսը մեծ չափերի կաշառք է տվել ազգությամբ ռուս նահանգապետին: Այդ ժամանակներից էլ սկսվել է մեր մեծ գերդաստանի սնանկացումը:

Ցավոք, մեզ տեղեկություն չի հասել ոչ միայն Մելիք Պետրոսի մահվան ստույգ թվականի, այլ նաեւ նրա գերեզմանի գտնվելու վայրի մասին, քանի որ չկա որեւէ արձանագիր տապանաքար: Դժվար է ասել, թե քանի տարեկանում ու ինչ պատճառով է նա կնքել իր մահկանացուն:

Մելիք Պետրոս Պահլավունին ունեցել է ընդամենը մեկ արու ժառանգ՝ Սիմոն անունով: Նրա մահվան պահին Սիմոնն ընդամենը եղել է 16 տարեկան պատանի: Սա խոսում է այն մասին, որ Մելիք Պետրոսը կյանքից հեռացել է շատ վաղ հասակում, այլ ոչ թե ծեր տարիքում:

Հովհաննես Մուշեղյան
/շարունակելի/

23.qxd 22/11/2026 17:46 Page 7

ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼ Է ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻՄ



Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Կարմիրգյուղ գյուղի արվեստի դպրոցը հյուրընկալել է ՀՀ ժողովրդական արտիստ, բանասիրական գիտությունների դոկտոր, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, «Սայաթ-Նովա» մշակութային միության ղեկավար, ժողովրդական եւ աշուղական երգերի կատարող, բանահավաք ու մանկավարժ Թովմաս Պողոսյանին:

Հանդիպումը կազմակերպվել է Կարմիրգյուղի արվեստի դպրոցի տնօրեն Օվսաննա Գեւորգյանի նախաձեռնությամբ եւ Կարմիրգյուղի բնակիչ Վահագն Հովհաննիսյանի աջակցությամբ:

Հանդիպման ընթացքում Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցի աշակերտները՝ ուսուցչուհի Արփինե Ջրաղացպանյանի ղեկավարությամբ, ներկայացրել են Թովմաս Պողոսյանի կյանքի եւ գործունեության մասին տեղեկություններ, իսկ արվեստի դպրոցի սաները հանդես են եկել գեղարվեստական կատարումներով:

Աշուղական արվեստի առանձնահատկությունների, դրա պահպանման ու տարածման կարեւորության մասին հետաքրքիր եւ բովանդակալից ելույթով հանդես է եկել Թովմաս Պողոսյանը՝ ներկայացնելով իր հարուստ փորձն ու տարիների գործունեությունը:

Անվանի արվեստագետի կատարած աշխատանքի, մշակութային նշանակալի ավանդի եւ ծավալած գործունեության մասին իրենց գնահատանքի ու երախտագիտության խոսքն են ասել Գավառի համայնքապետարանի առաջատար մասնագետ, մշակութային հարցերով պատասխանատու Հռիփսիմե Զանգիզորյանը, Կարմիրգյուղի արվեստի դպրոցի տնօրեն Օվսաննա Գեւորգյանը, Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Արմինե Գափոյանը, Կարմիրգյուղի բնակիչ, Ռուսաստանի Դաշնության Տոլյատի քաղաքում ,Հայեցի դաստիարակությունե կրթամշակութային կենտրոնի հիմնադիր-ղեկավար Սուսաննա Վարդանյանը եւ Գավառի պետական երաժշտական քոլեջի դասախոս Նաիրա Պետրոսյանը:

Հանդիպումն անցավ ջերմ ու անմիջական մթնոլորտում՝ դառնալով սերունդների միջեւ մշակութային կապի ամրապնդման, ազգային երգարվեստի արժեւորման եւ աշուղական արվեստի նկատմամբ հետաքրքրության խթանման գեղեցիկ առիթ:

Ալվարդ Մանուկյան

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԼՈՌՎԱ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ



Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտները հինտեգրված նախագծային աշխատանք են իրականացրել «Հովհաննես Թումանյանը եւ Լոռվա կենսաբազմազանությունը» թեմայով: Ինչպես տեղեկացրեց Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Անժելա Պողոսյանը, նախագծային աշխատանքը ղեկավարել են հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Նունե Ոսկանյանը եւ կենսաբանության ուսուցչուհի Հասմիկ Դավուդյանը:

Ինտեգրված նախագծային աշխատանքը վերաբերվել է ճանաչողական ու կրթական բովանդակալից ուղեւորության դեպի Լոռու մարզ: Նախագծի շրջանակում սովորողները հնարավորություն են ունեցել՝ բացահայտելու հայ մեծանուն գրող Հովհաննես Թումանյանի ստեղծագործական աշխարհը, ճանաչելու նրա ծննդավայրի բնապատկերները, պատմամշակութային միջավայրը եւ այն արժեքները, որոնք իրենց արտացոլումն են գտել գրողի գրական ժառանգության մեջ:

-Նախագծի առանցքում գրականության եւ իրականության փոխկապակցվածության բացահայտումն էր: Կարեւոր էր, որ սովորողները Թումանյանի ստեղծագործություններին առնչվեին ոչ միայն որպես գրական տեքստերի, այլեւ ճանաչեին այն բնաշխարհն ու պատմական միջավայրը, որոնք ձեւավորել են գրողի աշխարհընկալումն ու ստեղծագործական մտածողությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տվել՝ գրական ստեղծագործությունները դիտարկելու իրենց ծննդավայրի, բնության եւ ազգային կենցաղի համատեքստում,- նշեց Անժելա Պողոսյանը:

Ճանաչողական ուղեւորության առաջին կարեւոր կանգառը եղել է Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում, որտեղ սովորողները ծանոթացել են գրողի կյանքի կարեւոր դրվագներին, ստեղծագործական ուղուն, անձնական իրերին եւ նրա ապրած ժամանակաշրջանի պատմական իրողություններին: Թանգարանային միջավայրում գրողի կենսագրությունն ու գրական ժառանգությունն ավելի անմիջական ու շոշափելի են դարձել՝ նպաստելով նրա անհատականության եւ ստեղծագործական աշխարհի առավել խորքային ընկալմանը:

Այնուհետեւ աշակերտներն այցելել են Դսեղի եկեղեցի, եղել «Գիքորի աղբյուրի» տարածքում, ինչպես նաեւ այցելել Բարձրաքաշի Սուրբ Գրիգոր եկեղեցի: Այս վայրերի ճանաչողությունը հնարավորություն է տվել՝ անդրադառնալու Թումանյանի ստեղծագործությունների աշխարհագրական ու մշակութային միջավայրին, նկատելու հայրենի բնության, մարդկանց կենցաղի եւ ազգային սովորույթների արտացոլումը գրողի գրական աշխարհում:

Ուղեւորության կարեւոր բաղադրիչներից է եղել նաեւ Հաղպատի եւ Սանահինի վանական համալիրների այցելությունը: Սովորողները ծանոթացել են հայ միջնադարյան ճարտարապետության այս նշանավոր կոթողների պատմությանը, դրանց հոգեւոր, կրթական եւ մշակութային նշանակությանը, որի արդյունքում գրականության ուսումնասիրությունը բնականորեն ընդլայնվել է՝ ներառելով հայ ժողովրդի պատմության եւ մշակութային ժառանգության ճանաչումը:

Ճանաչողական այցի ուշագրավ դրվագներից է եղել նաեւ հանդիպումը «Գիքոր» ֆիլմում գլխավոր հերոսի դերակատար Ալբերտ Ղուլինյանի հետ: Հանդիպումը սովորողների համար առանձնահատուկ հնարավորություն է ստեղծել՝ համադրելու գրական կերպարի մասին իրենց պատկերացումները նրա կինեմատոգրաֆիական մարմնավորման հետ: Անմիջական շփումը առիթ է տվել՝ զրուցելու կերպարի մեկնաբանության, դերասանական աշխատանքի առանձնահատկությունների եւ գրական ստեղծագործությունը կինոարվեստում վերարտադրելու գործընթացի մասին:

Նախագծի ընթացքում կարեւորվել են ոչ միայն առարկայական գիտելիքների ընդլայնումը, այլեւ միջառարկայական կապերի բացահայտումը: Հայ գրականությունը, պատմությունը, աշխարհագրությունն ու բնագիտությունը հանդես են եկել որպես փոխլրացնող բաղադրիչներ՝ ձեւավորելով ամբողջական ճանաչողական միջավայր: Սովորողները հնարավորություն են ունեցել՝ դիտարկելու, համադրելու եւ վերլուծելու, ձեւակերպելու հարցադրումներ ու ստացած տեղեկությունների հիման վրա կատարելու սեփական եզրահանգումները:

-Նման նախագծային աշխատանքները կարեւոր նշանակություն ունեն կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Դրանք սովորողին հնարավորություն են տալիս՝ հանդես գալու ոչ միայն որպես գիտելիք ստացող, այլեւ որպես հետազոտող, բացահայտող եւ սեփական ուսումնառության ակտիվ մասնակից: Արտադասարանական ճանաչողական միջավայրը նպաստում է գիտելիքների ամրապնդմանը, ինքնուրույնության ու համագործակցային կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ հայրենիքի պատմամշակութային եւ բնական արժեքների գիտակցված արժեւորմանը:

«Հ. Թումանյանը եւ Լոռվա կենսաբազմազանությունը» ինտեգրված նախագծային աշխատանքը եւս մեկ անգամ ընդգծում է, որ կրթությունը չի սահմանափակվում դասասենյակով: Այն շարունակվում է թանգարաններում, պատմական հուշարձանների տարածքներում, հայրենի բնաշխարհում եւ մարդկանց հետ անմիջական հանդիպումներում: Երբ գրական ստեղծագործությունը բացահայտվում է իր ծննդավայրի, բնության, պատմության եւ մշակույթի համատեքստում, գիտելիքը դառնում է առավել խորքային, ընկալելի եւ հիշարժան:

Այս ուղեւորությունը սովորողների համար ոչ միայն Թումանյանի աշխարհին ավելի մոտենալու հնարավորություն էր, այլեւ հայրենիքի ճանաչողության, ազգային ու բնապահպանական արժեքների արժեւորման եւ ուսումնառությունը կենդանի փորձառության վերածելու կարեւոր քայլ,-տեղեկացրեց Անժելա Պողոսյանը:

Խոսրով Խլղաթյան

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՌՈՒՍ ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԴՄԻՏՐԻ ՄԱՍԼԵԵՎԻՆ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի թիվ 1 մանկական երաժշտական դպրոցը հյուրընկալել է ռուս դաշնակահար Դմիտրի Մասլեեւին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, այս իրադարձությունն աննախադեպ եւ հիշարժան է ոչ միայն երաժշտական դպրոցի, այլ նաեւ համայնքի համար: ,Պրիմավերաե բարեգործական հիմնադրամի նախագծերի շրջանակում Հայաստանում գտնվող երաժիշտը համերգային ծրագրով ներկայանում է վարդենիսցի երաժշտասերներին:

Շուրջ երկու ժամ տեւողությամբ համերգային ծրագրում աշխարհահռչակ ռուս կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովի ստեղծագործություններն են՝ Դմիտրի Մասլեեւի կատարմամբ: Հանդիսատեսը դաշնակահարին ընդունում է հիացմունքով եւ բուռն ծափահարություններով:


Դմիտրի Մասլեեւը Հայաստանում է ոչ միայն համերգային, այլեւ կրթական ծրագրերով: Մայրաքաղաքի եւ մարզերի երիտասարդ երաժիշտները մասնակցում են դաշնակահարի վարպետաց դասերին ու նրա նախաձեռնությամբ իրականացվող մրցույթներին: Վիկտորյա Ուլիխանյանն այդ մրցույթներից մեկի հաղթողն է եւ կրկնակային Դմիտրի Մասլեեւի նկավագակցությամբ կատարում է իր ստեղծագործությունը՝ ,Դեղձանիկի երգը:

Դաշնակահարի այցն ու համերգը Վարդենիսի մշակութային կյանքը հարստացնելու լուրջ քայլ է համարում համայնիք ղեկավարի խորհրդական Խաժակն Մկրտչյանը: Նա համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի անունից Դմիտրի Մասլեեւին է հանձնում շնորհակալագիր եւ հուշանվեր:

Անահիտ Կարեյան

23.qxd 22/11/2026 17:46 Page 8

ՀԱԿՈԲ ԱԶԻԶՅԱՆԻ ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԸ ԿՀԱՐԱՏԵՎԵՆ ՀԱՅ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՍՐՏԵՐՈՒՄ



Հայ մշակութային կյանքը եւս մեկ անդառնալի կորուստ կրեց: 88 տարեկանում կյանքից հեռացավ ՀՀ ժողովրդական արտիստ, Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի անվանի արտիստ, ռեժիսոր, մանկավարժ, Վանաձորի պատվավոր քաղաքացի Հակոբ Աղվանի Ազիզյանը:

Կյանքից հեռացավ հայ թատերարվեստի մի երախտավոր, արվեստագետ, որի անունը տասնամյակներ շարունակ անքակտելիորեն կապված էր հայկական բեմի, Վանաձորի մշակութային կյանքի եւ հայ թատրոնի հարուստ ավանդույթների հետ:

Հակոբ Ազիզյանը ծնվել է 1938 թվականի ապրիլի 19-ին՝ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում: Գյուղ, որն այսօր կարող է հպարտությամբ հիշել իր մեծանուն զավակին՝ հայ թատերարվեստում անմոռանալի հետք թողած արվեստագետին:

Նա ավարտել է Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը եւ 1964 թվականից իր ստեղծագործական կյանքը կապել Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հետ: Այդ օրվանից Վանաձորի բեմն ու նրա ճակատագիրը դարձան Հակոբ Ազիզյանի կյանքի անբաժանելի մասը:

Ավելի քան վեց տասնամյակ նա ծառայեց թատրոնին՝ կերտելով բազմաթիվ հիշարժան կերպարներ, հարստացնելով հայ բեմարվեստի ավանդույթները եւ իր դերասանական վարպետությամբ գրավելով հանդիսատեսի սրտերը:

Նրա կերտած Պեպոն, Արբենինը, Միքայելը, Բոլենբրոքը եւ բազմաթիվ այլ կերպարներ վկայում էին դերասանի ստեղծագործական լայն ընդգրկման, հոգեբանական խորության ու բեմական բացառիկ ներկայության մասին:

Առանձնահատուկ տեղ ունի Շեքսպիրի «Լիր արքան» ներկայացման մեջ նրա կերտած Լիրի կերպարը: Այդ դերակատարման համար 2011 թվականին Հակոբ Ազիզյանն արժանացել է «Արտավազդ» թատերական մրցանակի՝ եւս մեկ անգամ հաստատելով իր բացառիկ վարպետությունն ու ստեղծագործական հասունությունը:

Նրա արվեստը չէր սահմանափակվում միայն դերասանական գործունեությամբ: 1995-2000 թվականներին նա ղեկավարել է Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնը՝ որպես տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար, իսկ 2001-2002 թվականներին եղել է թատրոնի գլխավոր ռեժիսորը: Իր բեմադրություններով եւս նա նշանակալի ներդրում է ունեցել թատրոնի ստեղծագործական կյանքում:

Հակոբ Ազիզյանը նաեւ սերունդներ կրթած մանկավարժ էր: Տասնամյակներ շարունակ իր գիտելիքներն ու մասնագիտական փորձը փոխանցել է երիտասարդներին՝ դասավանդելով խոսքի մշակույթ, արտահայտիչ ընթերցանություն եւ հռետորական արվեստ: Նա գիտեր, որ իսկական արվեստագետը ոչ միայն ստեղծում է, այլեւ իր փորձով ճանապարհ է հարթում հաջորդ սերնդի համար:

Նրա վաստակը գնահատվել է պետական բարձրագույն կոչումներով: 1979 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր արտիստի, 2004 թվականին՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչման: Նա նաեւ Վանաձորի պատվավոր քաղաքացի էր:

Հակոբ Ազիզյանը նկարահանվել է հայկական մի շարք սիրված կինոնկարներում՝ «Հեղնար աղբյուր», «Հող եւ ոսկի», «Այս կանաչ, կարմիր աշխարհը», «Վերադարձ» եւ այլ ֆիլմերում՝ իր ներկայությամբ հարստացնելով նաեւ հայկական կինոյի պատմությունը:

Սակայն նրա կենսագրության ամենախոսուն էջերից մեկը, թերեւս, Վանաձորին անմնացորդ նվիրվածությունն էր: Նա ընտրել էր Վանաձորը, իր թատրոնը, իր հանդիսատեսին եւ իր ստեղծագործական տունը: Այդ ընտրությամբ ապացուցել, որ մեծ արվեստը միայն մայրաքաղաքներում չէ, որ ծնվում ու ապրում է. այն ապրում է այնտեղ, որտեղ կան տաղանդ, նվիրում եւ անսահման սեր սեփական գործի հանդեպ:

Հակոբ Ազիզյանի հեռանալով հայ թատրոնը կորցրեց իր երախտավորներից մեկին, Վանաձորը՝ իր մշակութային կյանքի նշանավոր դեմքերից մեկին, իսկ Գեղհովիտը՝ իր մեծանուն զավակին:

Մեզ համար այս կորուստն ունի նաեւ առանձնահատուկ խորհուրդ: Հակոբ Ազիզյանը հայրենի Գեղհովիտի զավակն էր: Նրա անցած ստեղծագործական ուղին, պետական բարձր գնահատանքի արժանացած վաստակն ու հայ մշակույթին մատուցած ծառայությունները հպարտության աղբյուր են նրա ծննդավայրի, Գեղհովիտ համայնքի եւ բոլորիս համար:

Այսօր լռել է նրա ձայնը, այլեւս չի բացվի բեմի վարագույրը նրա մասնակցությամբ նոր ներկայացման համար, բայց արվեստագետի կյանքը չի ավարտվում նրա հեռանալով: Այն շարունակվում է կերտած կերպարներում, պահպանված ներկայացումներում, սերունդներին փոխանցած գիտելիքներում եւ այն հանդիսատեսի հիշողության մեջ, որի համար թատրոնը հոգեւոր արժեք էր:

Մեծ արվեստագետները հեռանում են կյանքից, բայց չեն հեռանում ժողովրդի հիշողությունից: Նրանց թողած հետքը ժամանակը չի ջնջում:

Մեր կենտրոնի եւ Գեղհովիտ համայնքի անունից խորին ցավակցություն ենք հայտնում Հակոբ Աղվանի Ազիզյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, ընկերներին, գործընկերներին, Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի աննձնակազմին եւ նրա արվեստի բոլոր երկրպագուներին:

Կիսում ենք ձեր վիշտը եւ զորակցում այս ծանր ու անդառնալի կորստի պահին: Թող մխիթարություն լինի այն գիտակցումը, որ ձեր հարազատը պատվով անցավ իր կյանքի ու ստեղծագործական ճանապարհը՝ թողնելով անուն, վաստակ եւ մշակութային հարուստ ժառանգություն:

Հակոբ Ազիզյանի հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում, իսկ նրա անունը՝ հայ թատերարվեստի պատմության մեջ:

Հոգին՝ լույսերի մեջ, հիշատակը՝ հավերժ:

Խոնարհում եւ երախտագիտություն մեծ արվեստագետին:

Գեղհովիտ գյուղի
մշակութային կենտրոն
Մարտունու համայնքապետարան
Գեղհովիտ գյուղի վարչական
ղեկավարի գրասենյակ
«Գեղամա աշխարհ» թերթ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԽԱՉՔԱՐԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑՈՒՄ



Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանում Գավառի ավագ դպրոցի աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել է «Հայոց ինքնության լուռ վկաներ» խորագրով միջոցառում՝ նվիրված հայկական խաչքարերին:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը, Գավառի ավագ դպրոցի աշակերտները ներկայացրել են հայկական խաչքարերի պատմությունը, խորհուրդն ու նշանակությունը:

Միջոցառման ընթացքում գրադարանի թատերական խմբակը հանդես է եկել բեմականացմամբ, իսկ Գավառի արվեստի պետական քոլեջի սաները միջոցառումը հարստացրել են գեղեցիկ երաժշտական կատարումներով:

Միջոցառման հատուկ հյուրերն են եղել պատմաբան, խաչքարերի ուսումնասիրությամբ զբաղվող Սեւակ Արեւշատյանը եւ հնասեր, «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանը: Նրանք ներկայացրեցրել են իրենց ուսումնասիրություններն ու հետազոտությունները՝ ներկաներին փոխանցելով արժեքավոր գիտելիքներ եւ հետաքրքիր տեղեկություններ:

-Սեւակ Արեւշատյանն ու Թաթուլ Տոնոյանը շրջում են ոչ միայն Գեղարքունիքի մարզի պատմաճարտարապետական հուշարձաններում, այլ նաեւ հասցնում են լինել Հայաստանի տարբեր մարզերի տեսարժան վայրերում, սոցիալական ցանցերով հանրահռչակում այդ այցերի ու ուսումնասիրությունների արդյունքները: Իսկ այս միջոցառումը եւս մեկ առիթ էր՝ արժեւորելու մեր ազգային հոգեւոր ժառանգությունը, ճանաչելու նրա խորքերը եւ նոր սերնդին հաղորդակից դարձնելու հայոց մշակույթի հարուստ գանձերին: Հանդիպումն անցավ շատ հետաքրքիր ու բովանդակալից մթնոլորտում, հարցուպատասխանի ձեւաչափով,- ներկայացրեց Մարիամ Համբարձումյանը:

«Գեղամա աշխարհ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ճաշարանի (բուֆետի) տարածքի վարձակալության մրցույթի մասին

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ դպրոցի ճաշարանի (բուֆետի) տարածքը վարձակալության հանձնելու նպատակով:

1. Տարածքի վերաբերյալ տվյալներ.

Գտնվելու վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ,ք.Մարտունի, Նարեկացի 19 փ. 1-ին հարկ.

Մակերեսը՝ 23,6 քմ.

Նպատակային նշանակությունը՝ Դպրոցի սովորողների և աշխատակիցների սննդի կազմակերպում (առանց դպրոցական հաստատություններում արգելված սննդատեսակների վաճառքի).

Վարձակալության ժամկետը՝ 5 տարի.

Ամսական վարձավճարը՝ 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ (կոմունալ ծախսերի փոխհատուցման կարգը՝ պայմանագրով):

2. **Մրցույթին մասնակցելու պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերը.**

Մրցույթին կարող են մասնակցել իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (ԱՁ), ովքեր սահմանված ժամկետում կներկայացնեն հետևյալ փաստաթղթերը փակ ծրարով՝

•Դիմում՝ ուղղված դպրոցի տնօրենին (նշելով մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը և առաջարկվող ամսական վարձավճարի չափը):

•Պետական ռեգիստրի գրանցման վկայականի և հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենները:

•Տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը:

•Տեղեկանք հարկային պարտավորությունների բացակայության մասին:

•Սննդի կազմակերպման ծրագիր և նախնական ճաշացանկ՝ համապատասխան ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված դպրոցական սննդի նորմերին:

3. Մրցույթի անցկացման ժամկետները և վայրը.

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 02 դեկտեմբեր 2026թ., ժամը՝ 18:00-ն:

Մրցույթի անցկացման օրը և ժամը՝ 05 դեկտեմբեր 2026թ., ժամը՝ 11:00-ին:

4.**Հաղթողի որոշման կարգը**

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի երզարակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ:

Լրացուցիչ տեղեկությունների և տարածքը նախապես դիտելու համար դիմել՝

ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրինություն

Հասցե՝ ք. Մարտունի, Նարեկացի 19 փ.

Հեռախոս՝ 094-51-48-47, 093-75-55-21

էլ. փոստ՝ martuni2@schools.am

«Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ տնօրինություն

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Կայք էջ՝ https://geghama.am/
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 25. 11. 2026 թ.:
Տպագրվում է «Հայկարլի» ՓԲԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: